

Ա. բայածանցներու վրայ. Բ. թուական ածանցներու վրայ:

1862—63. — Յաւելուած հետազոտութեանց հայկական և անուանց (պոլականաց) վրայ: յօք. երեք տետրակ:

1863. — Յաւելուած հետազոտութեանց հայերէն բայերու վրայ:

1864. — Յաւելուած հետազոտութեանց հայկական անուանց (պոլականաց) վրայ:

1865. — Հայերէն ածանցներու վրայ (ի Հանդիսի Բէնֆէյի Արեւելք և Արեւմուտք. Գ. 34):

1865. — Հայկական գրութեան օկզնաւորութեան վրայ:

1865. — Հայկականք. Ա. — 1. Ածանցք. — 2. Ստուգաբանութիւն Աստուած, կոչք, առիթ, հոգի բառերու:

1870. — Հայկականք. Բ. — 1. Անկատար բայերու. — 2. Ստուգաբանութիւն աղոտ, օր, ինձ, տէր, սիրամարգ, վարդապետ, ռահի բառից:

1871. — Հայկականք. Գ. — 1. Հայկական բառից վերջաւորութեանց օրէնքներն ու շեշտերը. — 2. Ստուգաբանութիւն բաղմամբի բառերու:

1874. — Հայկականք. Գ. — 1. Բայերու երկրորդ դէմի և վերջաւորութեան վրայ. — 2. Գործիական հոլովի ք տառին վրայ. — 3. Ստուգաբանութիւնք բառից:

1878. — Հայկականք. Ե. — 1. Բայից սահմ. կատարեալի և ստորագասականին ց տառին վրայ. — 2. և. 2. ք. տառից վրայ. — 3. Ստուգաբանութիւնք բառից:

1877. — Հայերէն լեզուի դիրքը հնդկագերմանական լեզուաց շրջանին մէջ:

1890. — Հայ բառից ստուգաբանութիւնք (69 բառք):

Ասոնց հետ յիշենք նաեւ իւր եռահատոր գլխաւոր գործն Մարգարի լեզուաբանական գիտութեան (1876—87):

Փր. Միլլերի կենաց և գրուածոց վրայ մանրամասն և ընդարձակագոյն տեղեկութիւններ ինդրող ազգային բանասիրաց ցոյց կու տամք՝ Հ. Գաբրիէլ Չարբանայեան փ. Ոչսոսմասիրութեանց հայ լեզուի և մատենագրութեան յարեւմտաց (ԺՂ—ԺԺ դար)

Հմտայից գրուածն (էջ 295—305), տպագր. 1895, ի Վենետիկ:



ՎԱՍՏԱՐՈՅ ԿԱՐԱՅ

Ե Ա

ՅՈՒՐԵԼԵԱՆ ՀԱՆԴԵՍԻ Ի ԼԻԶՊՈՆԱ

Ա իստուայն գեղեցկագոյն ամօղն մէջ (մայիս 15—30) Լուսիտանիոյ մայրաքաղաքում, Հնդկաստանի ծովային ճանապարհի գիւտին չորհարարութեան ատմութիւն կատարուեցան մեծամեծ հանդէսներ, որոց համառօտ նկարագրի հետ, ըստ ինչորոշ ազնիւ բարեկամի՝ մը, պարտք կը համարիմ յօրինել աստ նաեւ այդ հանդիսից դիւցազնի՝ հուլականան Վաղդայ Եմամայի կենսագրականը, որ պատմութեան մէջ կը փայլի այն կենդանի լոյսներու նման՝ որը յաճախ փայլագելով երկնից սպիտակամութիւն ամպերու տակէն, յուշիկ յուշիկ կ'անհետանան կը կորսուին ի միութեան: Երեւոյն է նա 1469ին տեսնենք, Սինէս կոչուած փոքրիկ ծովեզներայ քաղաքի մէջ, Լիզպոնայի հարաւակողմը, 24 փարսան հեռու: Աղնուական տոհմի մը զաւակ լինելով՝ ի մանկութենէ վարժեցաւ նոյն ժամանակի յատուկ ասպետական և զիտական կրթութեամբք, որոնցմով Լուսիտանիոյ այդ դարու մէջ ունեցաւ ոչ սակաւ մեծանուն և հայրենեաց օգտակար զաւակունք: Հնգեռտտանեւ, բորդ դարու մէջ հանճարեղ և քաջասիրտ անձինք՝ ծովային ճամբորդութիւններ ընելով, նոր նոր երկիրներ գտնայլ իրենց մեծ պարծանք կը համարէին և հիմնովին կ'աւուժասիրէին

1. Յովակիմ Արաշիոյ տնոսանի բանաստեղծ և մատենագիր Լուսիտանացի, անդամ Լիզպոնայի Թագաւորական ճեմարանին:

հին հեղինակաց տիեզերաբանական և աշխարհագրական գրքերը։ Այդ գարու մէջ դեռ ժուր էր գտնել գիտնական մը որ չուսու-մասիրէր Ստրաբոնը և Պաղոմէոսը, և երեսակայութիւնը չլսուէր ընթերցմամբ Մարկոս Պոզոսի, Մենսպիլի, Քարփինիի, Ռոյիդպրուքի և այլոց ուղեգրական նկարագրութիւնները։ Աղգայիսիներէն էր և մեծահընչակ վասըղ, որ իւր ուսմունքն աւարտած էր, ոչ միայն Լուսիտանիոյ այլ և բոլոր Եւրոպիոյ մէջ հռչակուած Սակրէսի նաւային վարժարանում։ վարժա-րանական ընթացքը աւարտելէ վերջ թէեւ պատմագիրը չաւան-գէն ինչ իւր զործոց վրայ, սակայն ամենքն այլ միաբան կ'ըսեն թէ Յովհաննէս Բ թագաւորի ժամանակ, նա ունէր նաւարկութեան մեծ յաղագհութիւն և փորձ։ Հաւանական է կարծել որ վասըղ իւր ժամանակին երեսելիսնաւագետաց ոմանց հետաւոր ճամբորդութեանց ընկերացած լինի և այդպիսի պարագայից մէջ փորձառութիւն ստացած իւր ուղեւորութենէն և առաւել առաջնորդէն համառուոր զարձած և կոչուած է նաւագետ և խոհեմութեան, քաշարաւորութեան և հաստատամտութեան մէջ ոչ ոք կարող էր զինքը գերազանցել։ Նոյնպէս մեծ յարմարութիւն ունէր կատարելու նոյն իսկ ամենադժուարին բանագնացութիւններ, և ի դէպ ժամու մնուական միջոցներու ալ ձեռք զէրդնէր։ Գործող մարդու մը կարեւոր ամենայն յատկութիւններէ զատ, ունէր նաեւ ընդարձակ գիտութիւն, կարողացած էր բոլոր անուանի նաւագնացից օրական գրուածքներն և յիշատակագրեր, աշխարհացուցի վը-

րայ պարզ հայեացք մը տալով՝ մնաց առջեւ կը բերէր նոյն իսկ երկրագնացութեան օրագրերը, և անոնց բնակիչք և գլխաւոր բերքերը։ Ասոնց վրայ աւելցնէնք նաեւ իւր գերազանց յատկութիւնքն, իբրեւ նաւագետ ունէր անփոփոխ և անայլայլ վտանգութիւն յաղողութեանց, մեծ տենչ փառաց և խորին հաստատուն հաւատք Աստուծոյ բարութեան վրայ։

Քարթագինէն Տիագի և Քոլիլանսի ճանբորդութիւններէն վերջ՝ վասըղի երեսակա-

յութիւնը վառուած և մնաց մէջ սողորուած էր՝ ծովային՝ ճանապարհով Հնդկաստան երթալու գաղափարը։ Կ'ենթադրուի թէ սրչափ մեծ եղաւ իրեն ուրախութիւնը, երբ տեսաւ թէ Լուսիտանիոյ Էմմանուէլ Նոբապատկ թագաւորն ալ այդ մտքով և գաղափարով լեցուած, իր աշխարհի վաճառականութիւնն եւս քան ղեւ ծաղկեցնելու համար, կ'ուզէր Բարեկոսոյ Գլխէն անցնելով ղէպ ի Հնդկաստան տանող նոր ճամբայ մը գտնել։ Թաւառն իւր այս գաղափարն իրագործելու



Վասըղ կառայ

համար՝ ամէն միջոց ձեռք առած և շատ իմաստուն և երեսելի նաւագետաց առաւարկած էր, խոստանալով մեծ պատիւ և փառք տնոր, որ կարենար իւր փափաքը կատարել։ Բայց երբ այնչափ երեսելի նաւագնացներէն մէկը չի համարձակիլ ծովային այդ մեծ արշաւանքն ընելու, այն ժամանակ թագաւորն իւր բոլոր յոյսը դնելով վասըղի վրայ, զինքը կ'անուանէ տառջին նաւագետ կամ ծովակալ այդ դժուարին բաղնարութեան։ Անուանեալ փոյթ ընդ փոյթ կը սկսին պատրաստութիւններ տեսնել։ Թագաւորը վաղուց գիտնալով

որ պէտք չէ դրամ խնայել այսպիսի ուսու-
նական և շահաբեր ճամբորդութեան մը, իւր
հարստութեան մեծ մասը կը շնորհէ այդ նպա-
տակին : Երկայն և անստոյգ ուղեւորութեան
համար կարեւոր ամէն տեսակ պաշարներ
առատօրէն կ'ամբարեն նաւերու մէջ . ինչ-
պէս, հաց, դինի, ալիւր, մորթեղու կենդա-
նիներ, համեմունք, զեղեր, պէնքեր, զրահ-
ներ, և այլն : Լուսիտանիոյ մէջ գտնուած
ամենէն քաջ և վարժ նաւապետներ և նա-
ւարտներ ընկերացան վասքոյի այս մեծ
ուսումնական արշաւանքի, յորոց յիշեցք ե-
րեսելին Բարթոլոմէոս Տիագ, որ տասը
տարի առաջ Բարեյուսոյ Գլուխը հասնելով ա-
նուանած էր զայն Գլուխ Մարկագ : Այս
ճամբորդութեան համար նոր պատրաստուած
ստորմիջն կը բաղկանար 3 նաւերէ . Սուրբ Գա-
րիէլին վրայ, որ 120 տակառաշափ կրնար
բառնալ, վասքոյ կամայ կարնցնց թագաւորէն
իբրեւ նուիրուած դրօշը . Սուրբ Ռաֆայէլի նա-
ւապետ եղաւ իւր եղբայրն՝ Պոզոս կամայ .
իսկ Պերրիոյ փոքրիկ նաւուն առաջնորդու-
թիւնն ալ, որ հազիւ 50 տակառաշափ կրնար
բառնալ, յանձնուեցաւ Նիկողայոս անուամբ
փորձառու նաւապետի մը : Նաւատորմի մէջ
կային 160 անձինք, որոնց մէկ մասն կը
կազմէին փորձ նաւապետներ և նաւատորմներ,
երկրորդ մասն քաջ և ընտիր զինուորներ,
և երրորդ մաս մ'ալ մահապարտ բանտար-
կեալներ, որոնց խոստացաւ թագաւորը նե-
րումն շնորհել, ի թէ յաջողութեամբ ողջ ա-
ռողջ դառնային ի հայրենիս : Ամէն պատրաս-
տութիւններէ վերջ, Էմմանուէլ թագաւորը
մեծ շքով դնաց Լիզպոնայէն երկու մղոն
հեռու Պենիս մէջ քաղաքի մէջ կառուցուած Ռե-
թլլիյի եկեղեցին, ուր ներկայ էին բազ-
մաթիւ ժողովուրդք և ազգականք՝ այդ ու-
ղեւորութեան մասնակցող անձանց . Յետ ըստ
սովորութեան սուրբ Պատարազը տեսնելու և
եպիսկոպոսի օրհնութիւնն առնելու, խաղա-
ւորն կը սկսի որոտաշարժ ճառ մը և խօսքերն
ուղղելով առ վասքոյ, կը բացատրէ թէ քիչ
մեծ յոյս ունին իր հետ աքաղել Լուսիտա-
նիա՝ այդ ուղեւորութիւնէն և թէ ինչպիսիք
նշողութեանց կը սպասեն . ի վերջոյ իրեն կը
յանձնէ փոյիշման ուղեւորութեան աշխար-

հացոյցը, շտա մը տեղեկատու թղթեր, և
քանի մը յանձնորարական նամակներ առ
ասիացի իշխանս և առ թագաւորն ֆալիքու-
թի :

Փոքրիկ տորմիջն 1497 տարւոյ յուլիս 8ին
սկսաւ փառաւորապէս կտրել ծովու մակերե-
ւոյթը, արտառուօք ազգականաց և բարեկա-
մաց, մաղթանօք և ծափահարութեամբ և
առնչուն ժողովրդեան : Վասքոյ նաւերուն բն-
թացքը ուղղելով դէպի Գալարի Գլխոյ կղզի-
ները, հոն հասաւ օգոստոս 3ին, և յետոյ
յոռաջ դիմելով հանդիպեցաւ Մինայի նա-
ւահանգիստը, և անտի ուղղակի դէպ ի հարաւ
նաւելով խարիսխ նետեց Ս . Հեղինէի խորի
մէջ, ուր ցամաք ելնելով շարաթ մը կեցաւ,
զիտելու և ուսումնասիրելու համար տեղւոյն
բնակաց բարքը, տարազը և սովորութիւնը :
Վերջապէս ճամբայ ելնելով Բարեյուսոյ Գլխէն
անցաւ նոյնմբեր . 22ին, և դէպ ի արեւելեան
եզերքը նաւելով ցամաք եկաւ Ս . Պեդրալիոսի
խորշէն, և ապա ղեկսեմբեր 17ին հասաւ
Փրուզի ժայռերուն, Համառօտութեան հա-
մար զանց կ'ընեմ մանրամասնօրէն յիշելու
վասքոյի հանդիպած ամէն տեղերը : Ընդ
հակառակն, խիստ յորմար կը համարիմ, և
ընթերցողաց ալ անշուշտ համեմի պիտի թուի,
ի թէ ընթերցունքն առտ հաշակապանած Գա-
մեշնիս¹ այն սողերը, որովք կը նկարագրէ այն
ուրուականն որ կը հանդիպի վասքոյի՝ Մրրկաց
դիւէն անցնելու պահուն .

« Արդէն կ'ընէ (վասքոյ) հինգ անգամ
ծածկուեր էր արեղակն, քանի որ այն տե-
ղուանքէն հեռացեր էինք, ինչուան այն ա-
տենն անծանօթ ծովերն ճեղքելով . յաջողակ
հողմունք քաղցրասիք կը շնչէին . գիշեր էր,

1. Քաւմոնէն մեծահռչակ բանաստեղծ և ե-
ռանգուն հայրենասէր Լուսիտանացի (1528-
1579), որ իւր Լոսիտանոք կամ Լոսիտանականք
քերթուածոյն ներք առնելով վասքոյ կամայի
առաջին ուղեւորութիւնն ի շնչիկս, իւր ազգին
բանաստեղծական պատմութիւնն ըրած է և
զերպացնց կերպով յաշուած : Իւր երրորդ հա-
րիւրամեայ դարադարձի առթիւ Բաշտօնը հրա-
տարակած է 1880 տարւոյ 369-372 էջից մէջ
իր կենսագրութիւնը :

և մենք հանգիստ ու անհոգ կը հսկէինք նաւուն խեղճը վրայ: և ահա յանակնկալօ՝ օդը մթնցընող ամպ մը երեւցաւ մեր գլուխներուն վրայ:

«Այնչափ անազին և այնչափ թանձրախիտ էր պղծ ամպը՝ որ անընկճելի անաբեւ կուժին մը ձգեց ամենուս սրտին մէջ. կը մոնչէր ծովը ու կը շառաչէր՝ ինչպէս սեռաժայռի մը հետ բախելուն ատեն: Ո՛վ գերազայն կարողութիւն, կ'աղաղակէի ես, ինչ աստուածային ոպանալիք կամ որպիսի գաղաւնի հրաշք մը կը ծածկէ մեզի այս ծովը ու այս երկիրքը. վասն զի մերկէ մը աւելի բան մ'է ասիկայ:

«Հազիւ թէ խօսքս լնցնուցեր էի, և ահա օդուն մէջ մեծամարմին ու զօրաւոր ուրուական մը կ'երեւանար. անգեղեյ կերպարանք մ'ունէր, յաղթ մարմին մը, ճակատը մըլլերկայոյց, աչք գոգացեալք, ու չարութիւն և սրամտութիւն նկարուած երեսին վրայ. արժողոյն, աւագախօսն մաքերով, սեւ շրթամբք և զեղին ակունքերով:

«Այնչափ անազին էր մեծութեամբ՝ որ երկրորդ Հոռոսի արձան մը կրնար սեպուիլ, աշխարհի եօթն հրաշալեաց մէկն: Կը խօսի, ու ահագնաստատ ու մռնալից ձայնը՝ կարծես թէ անգնզոց խորունկէն կ'ելնէ: Ձիները տեսնելնուս և ձայնը լսելնուս պէս՝ սաբառաւ մը խաղաց մեր մարմնոյն մէջ, ու մազերնիս անկուեցաւ գլուխներուս վրայ:

«Աղաղակեց. Ո՛վ քան զամենայն ազինս յանպկնադոյն ժողովուրդ, որ մեծամեծ գործերովդ զարմացուցիր զաշխարհ, ու կարգէ դուրս աշխատանքներուդ՝ առած զմիպակ ու անթիւ պատերազմներուդ մէջ՝ երբեք չես գիտեր հանգչիլ, ու հիմա այս յափտեանական տահմաններն ալ խորասկերտ, կը համարձակիս նաւագնաց ճանապարհորդել այն ընդարձակ ծովուց վրայ, որունց պահպանութիւնը երկար ատեններէ ի վեր ինծի յառնուած է, ուր օտար նաւ մը երբեք իր ընթացիցը հետքը ձգած չէ:

«Այս գաս քննել բնութեան, ու այս գիւլին տարերց մէջ ծածկուած գաղտնիքը, առ որ աչք ի մահկանացուաց համարձակած է երբեք, որչափ ալ մեծ ըլլայ ազնուականու-

թեամբն ու հանճարովը: Լսէ՛, վասն զի յայտնի են ինձ, թէ որպիսի վտանգք և ազդեց պահուած են քու անասման յանդէնու. թեանդ՝ ընդարձակատարք Ովկիանոս վրայ, ու այն աշխարհաց մէջ՝ զորս ահաւոր և արիւնքաւոր պատերազմներով պիտի նուաճես:

«Գիտցիր որ այս ուղեւորութեան յանգնող ամէն նաւերուն՝ որեւրիմ թշնամի պիտի ըլլան այս ժայռերը, ու խաղալիկ հողմոց և սաստկայայտ մերկաց. և այն ատըջին նաւաւորմին որ այս լծընկէց ծովէն համարձակի անցնիլ, այնպիսի պատահաս մը յանակնկալը վրան պիտի բերեմ, որ վտանգը ոչինչ սեպուի՝ անոր հետեւորդ ազետից ատըջ:

«Հոս, եթէ չեմ խաբարի, զիս գտնողէն կարող պիտի ըլլամ լիովին իմ վրէժս առնուլ. և քու յամառ վտահարութեանդ պատուհասը հոն պիտի չլննայ. վասն զի տարուէ տարի պիտի զան հասնին ձեր նաւերը հոս խորտակուելու համար, ու այնպիսի վտանգներէ անցնելու՝ որ աղետից մէջ ամենէն փորագոյնը պիտի սեպուի մահը:» (Լուսիս տակաւալեց, երգ է. թարգմանութիւն Հ. Գալսեպին վ. Զարհանայեան):

Դեռ առաջ տանելով անազնատեսիլ ու բուական իւր խօսքերը, չար գուշակութիւններ կ'ընէ սպազայ լինելիք դէպքերու, այնպէս որ հազիւ թէ խօսքը կը լնցնուի, վասն զոյ զայրացած և անարեկ կը հարցնէ և կ'ուզէ իմանալ իր ո՛վ ըլլալը: Այն տեսն ուրուականը կը պատասխանէ.

«Ես այն մեծ ու թաքուն գլուխ եմ՝ զոր զուր Գլուխ Մըրկաց կը կոչէք: Ոչ ոք ի մահկանացուաց, Պաղտմէս, Պոմպոնիոս, Ստրաբոն, Ղլինիոս, չլըցան ճանչնալ զիս: Երկրին ամենէն աւելի ահաւոր հսկայական եմ, Էնգելագետայ, Էրէնոսի և անոր որ հարիւր ձեռք ունի. իմ անունն է Ալքամաս, տոր, որ Վուկանոսի շանթիքը թօթափողին դէմ տրուած պատերազմին մասնակից էի...» Լուսիստանիացի քերթողի այս մի քանի տողերով թող բաականանան ընթերցողք, թէեւ արժան էր ի մէջ բերել իւր անմասն բերթուածէն նաեւ ուրիշ տողեր, որոնցմով խիստ լաւ նկարագրած է իր զիջագանը. սակայն յօդուածն ընդարձակելով ձանձրալի լինելէ

խորշելով՝ զանց կ'ընեմք : 1498 տարւոյ յու-
նուար 10ին մեծանուն ծովակալը զտա գետ
մը և անուանեց Պրեմէի գետ (Rio do Cobre),
և երկիր մ'ալ գտնելով՝ անունը դրաւ Երկիր
Բարի Ազանց (Terra da Boa Gente) :
Հինգ օր այս երկիրը կենալէ վերջ՝ Սոֆա-
լայի եզերքէն նաւելով մարտի առաջին օրե-
րուն մէջ հասաւ Արար մահմտականաց հարբու-
րութեամբ ձոխ Մոզամպիկը քաղաքը : Ա-
ռաջին անգամ մեծ սէր և բնգունելութիւն
կը գտնեն Լուսիտանացիք այս տեղ , բայց
հազիւ թէ Արարը կը տեղեկանան ասոնց
մահմտական չլինելուն , մէկէն կը մտաբե-
րեն և կը պատրաստուին զիրենք սպաննելու :
Բայց վաստից ժամանակ վաստկելով փութով
կը զինէ իւր նաւուն երկու մեծ մակողները ,
որոց միոյն վրայ ինքը կը նստի խումբ մը
ընտիր զօրաց հետ և միւսն կը յանձնէ Նի-
կողայոս նաւապետին , և զիմելով Արարաց
նաւերուն վրայ կը հրամայէ իրեններուն ուրա-
կոծել . անոնք արտասփահար կը սկսին փախ-
չիլ : Հոս առաջին տնդամ հանդիպեցաւ վա-
քոյ արարական մեծամեծ նաւերու , որոց մէջ
կը գործածուէր ուղեցոյցն և ծովային քար-
տէսներ : Լուսիտանացիք ձեռք կը ձգեն և
կ'աւարեն այս նաւերէն մէկ քանին , որոց
մէջ գտնուած իրեղէնները կը բաժնէ վաստից
նաւատարներուն՝ իրեն պահելով միայն քանի
մը արարական զրքեր , զորս միտք օնէր
Լիզպոնս դարձած պահուն՝ նուիրել թագա-
ւորին : Ճամբան շարունակելով կը հասնի
նոյն ժամանակ վաճառականութեամբ խիստ
ծաղկած Մոմպազա քաղաքը : Մոմպազացիք
այլ կրօնական մոլեռանդութեամբ չէին տար-
բերիր Մոզամպիկցիներէն , և իրենք ալ փոր-
ձեցին վնասել տշնչաբերել Լուսիտանական
աորմիդն , բայց արթնութեամբ և խորագի-
տութեամբ վաստիցի բան մը չկրցան ընել :
Մոմպազայէն առագաստները բացուեցան և
նաւերն սկսան յառաջ խաղալ դէպ ի Մելիկ-
տա , ուր հասնելով մեծ սէր և բնգունելութիւն
գտան տեղացիներէն . քաղաքին իշխանն ալ
այցելեց Լուսիտանական տորմիդն և մեծա-
պէս պատուեցաւ :

Հ. ՍՈՒՐԻՍՍ ԷՓՐԻՍԵՆՆԸ

Շարայարեի

ԻՄ ԶԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Տպատրոսթիաններ)

(Շար. տես էջ 280)

Բ

ԶՈՒԼՅԱՅԵ ՄԻՆԶԵԻ ԽՈՑ

ՊԱՏՏՈՆԵԱՆ խորամանկութեամբ աչքի
ամփոփումով՝ շրջապատող մարդկանցից ծա-
ծուկ գլխի զցեց ինձ՝ միայնակ ներս մտնել
խրհիթել : Ես չը հակառակուեցի հետաքը-
րուելու համար քնչ է կամքը , զիտաւորու-
թիւնը :

— Ներեցէ՛ք , պարոն , — ասեց նա՝ ծխե-
լով զէլլանը , — որ ձեր այսօրուայ հանդի-
պումը շատ թանկ նստեց մեզ , որովհետեւ
զուր արգելք եղաք մի բանի « վիզլի » մեզ
հասանելիք տուրքերի ստացման :

— Ասեցէք , խնդրում ենք , մենք , որ տու-
գանքներ չառնենք , քնչպէս կարող ենք ապրել ,
ճանապարհորդներից շատերը վերցնում են
անցագրերը թէհրանում , թուրքիում և այլ
նշանաւոր քաղաքներում , իսկ այդ սահմա-
նագծերի վրա շատ սակաւ է պատահում .
հետեւաբար օգտւում են այնտեղի անցա-
գրական պաշտօնեաները և քնչ օգուտ մեզ ,
եթէ առանց « վիզլի » տուրքի՝ լոկ ձեռակա-
նութեան համար նայենք միայն անցագրե-
րին և այնպէս ճանապարհ ձգենք անցորդնե-
րին : ԶԷ՛ որ անցագրի մենավաճառութեան
իրաւունք ձեռք բերելու համար մենք կա-
ռավարութեանը տարեց տարի « իշրայ » ենք
վճարում , այն նպատակով՝ որ մէջ տեղը

1. Իսմիկ ժողովուրդը՝ ստում է « աւերակ
արեց » :